ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 08 » փետրվար 2024թ. No 676 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, եվրասիական տնտեսական միության խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և IX բաժնի 153-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/629-24 առ 01.02.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1.Ընդունել եվրասիական տնտեսական միության գրանցման ընթացակարգով գրանցված 3 դեղի հետգրանցումային փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի փետրվարի « 08 » - ի N 676 - Ա հրամանի

## Գրանցման հավաստագրի վերաձևակերպում չպահանջող Եվրասիական տնտեսական միության գրանցման ընթացակարգով գրանցված դեղերի հետգրանցումային փոփոխությունների ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դիաբետոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ | 60մգ; (30/1x30/) բլիստերում, (60/2x30/) բլիստերում | Լես Լաբորատուիրես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիդի | Ֆրանսիա | Լես Լաբորատուիրես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս | Ֆրանսիա | Դ | 000531 31.01.2024 |
| 2 | Դիաբետոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ | 60մգ; (28/2x14/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում | ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպախորսկոյե, Մոսկվա | Ռուսաստան | Լես Լաբորատուիրես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս | Ֆրանսիա | Դ | 000531 31.01.2024 |
| 3 | Դիաբետոն ՄՌ | գլիկլազիդ | դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ | 60մգ; (28/2x14/) բլիստերում, (30/2x15/) բլիստերում, (30/1x30/) բլիստերում, (60/2x30/) բլիստերում, (60/4x15/) բլիստերում | ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպախորսկոյե, Մոսկվա- փաթեթավորող, բաց թողնման հսկող, Լես Լաբորատուիրես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան ճ., 45520 Ժիդի, Ֆրանսիա- բալք արտադրող, որակի հսկող | Ռուսաստան | Լես Լաբորատուիրես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Սուրեն սեդեքս | Ֆրանսիա | Դ | 000531 31.01.2024 |